

- 26 Սոյն պատրաստութիւն հոգւոյ եւ մարմնոյ
Անդորրէր ըզնա ըստ իւր սերտ յուսոյ,
Զելն աստի բարեաւ խոկայր ըստ արւոյ
Աւ գերկնից ըզփառս յար ժառանգելոյ:
- 27 Այլ այս ամենայն հանդերձանք պատկան
Քրիստոնէի՝ առնն խոհական,
Թէպէտ էր Սարգսի յոյժ ըսփոփական,
Բայց առթէր սրբոսի հարուած թախծական:
- 28 Երգարեւ զհարգ հընար էր հիգիս
Առանց հօր իմում ուրախ կեալ յաստիս,
Որ լուսաւորեալ ըզմտս եւ զոգիս
Տընտեսէր գրթով զիմ համայն կարիս:
- 29 Որ եւ ոչ առնէր ինձ զայս ամենայն,
Վասն անարժանիս ժրբաջանութեան,
Կամ տըկար անձինս արբանեկութեան,
Այլ ըստ բընածին սրբոսին բարութեան:
- 30 Որով սիրէր զիս գերթ հայր բարերար,
Թէ եւ չէի միշտ որդի կամարար,
Կամ պաշտօղ նորին մրտօք կամակար,
Եւ կամ յօժարիչ համբակ հարկահար:
- 31 Ապա օր յօրէ աճեալ ոգւոյս ցաւ,
Տագնապեալ անձն իմ պաշարեալ վըշտաւ,
Ի՛ ամեհի ալեօք թախծութեանց անբաւ,
Տատանեալ տակայր սրպէս ծրփեալ նաւ:
- 32 Իսկ յետ աւուրց ինչ զօրութեամբ դեղոյ
Հեռանայր վըտանկ մահուն հարուածոյ,
Այլ դառնայր անդրէն նոյն յետ մի ամնոյ
Վըշտանգել ըզնա, մատնել զիս ցաւոյ: